ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ

(Հաղորդեց Մ. Բարխուդարեան)

I.

Միքայէլ արք-եպիսկոպոս Սալլանթեանցի Նամակը Կարապետ արք-եպիսկոպոսին

—

Բարձր սրբազան Կարապետ Արք-եպիսկոպոս,

Ողորմած Տէր և Հայր,

Հանրատարած համբաւ ազգասիրութեան ձեր կանխաւ ժամանեալ առ մեզ՝ մինչդեռ ի Մոսկով քաղաքի ստորադրեաք զանդաստանն մերս եկեղեցւոյ և ազգի. բորբոքեալ էր զբանական սրտի մեր զրուց՝ կապիլ ընդ բարձու սրբազնութեան ձերում ընդ ներքնոյն և արտաքին ոսկէձոյլ կապանօք սիրոյ և բարեկամութեան· այլ որ տնօրինէն զմարդկայինս զամենայն, յապաղելն ցայս վայր՝ պահեաց ներկայ առթի գալստեան առ ձեզ ձերոցդ ուխտաւորաց, ընդ որս ո՛չ զանց արարաք երկտող զրութեամբս գալ ի համբոյր քրիստոսաբարձ աջոյդ օծութեան և մաղթել զարժանընկալ աղօթս ձեզ մեզ ի նպաստ փրկութեան և յաջողութեան, որովք մարթասցուք թերևս գտանել զնաւահանգիստն երանութեան՝ զերծուցեալ զօձիս յամենապաշտ ոգեսպառ տրտմութեանց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ամենուրեք սերմանելոց։

Մեք ի կատարածի սեպտեմբեր ամսոյ նախընթաց ամի եկեալ աստ յուխտ և յերկրպագութիւն աստուածընկալ նշխարաց և սրբազան գահակալաց յուսաւորչադիր աթոռոյս, մինչ թախանձէաք ո՛չ բանիւ միայն, այլ և օրինաւոր խնդրագրով զվեհափառութիւն սոցին՝ արձակել զմեզ վերստին ի նախնական վիճակ և պաշտօն մեր ի Մոսկով, ո՛չ միայն ո՛չ հանդիպեցաք խնդրելեացս, այլ և բռնադատեալ ի սուրբ հնազանդութենէ արկաք զպարանոց մեր ընդ ծանրագոյն լծով եպիսկոպոսու-

թեան, յոր լծեաց զմեզ սրբազնակատար Յովհաննէս Հայրապետն մեր ի տոնի Երևման խաչի ի (յ)30 ապրիլի, որով ի կանխակալ յառաջահիմն տկարութիւն մեր յաւելաւ նոր բեռն մեզ անհանդուրժելի ծանրութեան, և անվճարելի պարտականութեան անդուլ անդադար մշակութեան յայգւոջ տեառն զօրութեանդ. յորոյ ի նպաստ վերստին մաղթեմք զբարձրագահ սրբազնութիւն ձեր ձեռն կարկառել մեզ երկնաթռիչ Հայցուածովք ձեր առ որ յաջողին զամենայն յամենայնի ի փառս ընտրելոց իւրոց սրբոց։

Ինչ մի խնդիր է մեր յաղգասէր հօրէդ սրբութեան. եթէ ի մէջ գղերաց տեղւոյդ կամ մանկանց դպրոցիդ գտանիցի մանուկ այնպիսի, որ անյագօրէն ծարաւի իցէ բարձրագոյն ուսմանց գիտութեան և լեզուաց, նոյն և կամակար իցէ ստանձնել զվարդապետական վիճակ սրբութեան, մաղթեմք ուղևորեսջիք զնա առ մեզ յաշակերտութիւն, միայն թէ մի՝ իցէ պակաս զ15 կամ զ16 ամն, և ո՛չ առաւել զքսանն. և զի առողջ իցէ մարմնով՝ աչօք՝ և խառնուածով՝ սրամիտ և նրբահանճար յուսումն իմաստից. մաքուր վարուք անարատութեան ո՛չ ապականեալ ի չար ընկերաց, զի լինիցի մեզ յիշատակ բարեաց յապայն և մշակ պարծանաց յազգիս և յեկեղեցւոջի փառս Քրիստոսի Աստուծոյ։

Զունելով առ ժամս յաւելուլ ինչ արժանաւոր ձերումդ ծանօթութեան, և յանձն արարեալ զմեզ աստուածաբնակ ազգասէր սրտի ձեր քաղցրութեան

Մնամ աղօթարար ծառայ արք-եպիսկոպոս ուղղափառ Հայոց ՄԻՔԱՅԷԼ ՍԱԼԼԱՆԹԵԱՆՑ
միաբան սրբոյ Էջմիածնի։

'Ի (յ) 2 Մայիսի 1833
Ի սուրբ Էջմիածին

II.

Առաջիկայ նամակի հեղինակը Վենետկի Մխիթարեան միաբանութեան անդամ Հ. Մինաս վ. Թժշկեանն է։ Նամակից երևում է, որ նա լաւ ծանօթութիւն է ունեցել մեր հին գրծիչներից մէկի, Առաքել վարժապետ Արարատեանի հետ և սրա միջոցով գրչագիրներ է տեղափոխելիս եղել ս. Էջմիածնից ս. Ղազարի կղզին։ Նամակում յիշուած մեծապատիւ Մանուէլ վարդապետը անշուշտ Հ. Քաջունին պիտի լինի։

Առաքինափայլ իմաստասիրի աղնուամեծար աղա Առաքելի ողջոյն Ցիսուսանդ և սէր տիրական ձեռեսցի օրհնութեամբ։

Զշնորհեալդ ի 19 փետր. սխորժահամ պտուղ ցանկալի մատանդ ամենայն սիրով և խնդութեամբ ընկալեալ արդարև զուարճացայ ի հոգի յիշելով անյեղլի վճիռ տէրունեան թէ փոխանակ առաքինասէր իմաստուն հարց եղեցին առաքինի որդիք պարծանք Հայոց և ազգին. որպէս տեսանեմք զբարեսիրութիւնդ, որով և ոչ սակաւ շնորհակալութիւն հանդերձ աստուածային օրհնութեամբ վերընծայեմ. մանաւանդ սակս ազգասէր ջանիցդ ի ձեռս բերելոյ զկարևոր գրչագիրս առ ի տալ ի լոյս անթերի յագուրդ իմաստասէր մտաց։ Արդ խնդրի դարձեալ յայնուութենէ Ձերմէ զհետ լինել գտանել զգրչագիրս աշխարհագրութեան Խորենացւոյն. կարծեմ դիւրաւ ի ձեռս բերեալ զայն յԷջմիածնէ, զի կամք են մեզ հետզհետէ զամենայն ընտիր մատենագրութիւնս նախնեաց մերոց յստակ ի լոյս ընծայել ի շահ ազգիս։ Եւ Նորին աղագաւ բաղխել զիմաստախոհ սիրտ մտերիմ խօսել ընդ արքիապատիւ Կարապետ եպիսկոպոսի տեղւոյդ և հաճեցուցանել զնա, զի փոխանակեսցէ ընդ տպագրեալ մատենից մերոց զկրկին հին ճառընտիրս, մին երկիլեան և միւսն գրեալ ի Թուիս ՆԼ. եթէ այս չեցէ հնար, զէթ թոյլ տացէ գտանել այդր և տալ ընդօրինակել զճառս ինչ ի մատենից անտի, զոր և ողջունեմ խոնարհութեամբ ամենայն մեծարանօք և ակնածութեամբ։

Պատուական ծերունի մտերիմն մեր, Մեծապատիւ Մանուէլ վարդապետ զովելի վարուք առանձնացեալ ի Վանս Էսկի Խրիմի ճգնի առողջ մարմնով աղօթելով վասն սիրելւոյդ։ Խնդրեալ էք զցուցակ մատենից Նորոգ տպագրելոց. ահա որչափ ինչ առ ժամս գտանի առ իս յղեմ այսու զցանկն. այլ ի ժամանել միւս արկեղ մատենից ի ձեռս իմ, դարձեալ ազդարարից Ազնիւ զիտնականիդ, յուսալով ունել զՁեզ սեան (?) մտերմիդ իբրև զհոգևորդ ծնող յարատևեալ մի օրինակ ի նոյն առաքինութեան ի պարծանս մեր։ Զորս և յանձն արարեալ հանդերձ իւրայնովք ի խնամս Բարձրելոյն։

Մնամ Ազնուամեծար Ցէրութեանդ աղօթարար ծառայ
Հ. Մինաս վարդ. Բժշկեան

Խարասու, 3 ապրիլի 1840.